2/26.11/60

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0005-21

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***«Արմավիր-6» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 15 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 0005-21

<<12>>01 2021թ.

Արմավիրի մարզի «Արմավիր-6» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմադրութային փաստաթուղթ. - ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Մշակումները կատարվել են պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր ՈՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9-1 շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Նախագծերի մշակման համար որպես ելակետային նյութեր և տվյալներ հիմք են հանդիսացել.

- տարածքի Մ1:10000 մասշտաբի տեղագրական հանույթները,
- համայնքների տարածքի կադաստրային քարտեզները:

Համայնքների հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվեկշիռ «Ձև 22» ձեռք են բերված ՀՀ անշարժ գույքի կադաստրի, իսկ համայնքների քառամյա զարգացման ծրագրերը ՀՀ Արմավիրի մարզի կայքէջերից:

«Արմավիր-6» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման (այսուհետ «Արմավիր-6» ՄՄՀՏՊՓ) նախագիծը քաղաքաշինական ծրագրային՝ տարածական պլանավորման, փաստաթղթի նոր տեսակ է, որը համադրում է միկրոռեգիոնալ և տեղական մակարդակները և որում համատեղվում են տարածքային հատակագծման նախագծի, գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի վերաբերյալ՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.4-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված պահանջները: Այն մշակվում է միկրոռեգիոնալ միավորի սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների ներառմամբ, կանոնակարգելով ինչպես տեղական, այնպես էլ միկրոռեգիոնալ միավորների համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տարածական զարգացման խնդիրները:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվել են միկրոռեգիոնում ներառված

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, մասնավորապես.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրների բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Նախագծում համակողմանի վերլուծվել և ընդհանրացվել են համայնքների ընդհանուր բնութագրերը՝ հետևյալ կետերով.

- տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգը երկարաժամկետ հեռանկարում,
- բնակավայրերի գործող և կանխատեսվող տնտեսական (գյուղատնտեսական, զբոսաշրջային, արդյունաբերական, մշակութային, գիտատար) մասնագիտացումները,
- տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքների և օբյեկտների տեղաբաշխման ուրվագիծը,
- սոցիալական օբյեկտների առկա և կանխատեսելի տեղաբաշխման ուրվագծերը,
- ինժեներական նախապատրաստման, տարածքների և բնակչության պաշտպանության բարձրացմանն ուղղված ծրագրերը,
- տարածաշրջանի զարգացման ներդրումային ծրագրերը:

Նկարագրական մաս. «Արմավիր-6» միկրոռեգիոնը ընդգրկող տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի կենտրոնական մասում, որտեղ տեղակայված են Մայր Աթոռ սբ. Էջմիածինը Վաղարշապատ քաղաքում և Ակնալիճը:

Բացի Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքից, այն ներառում է Ակնալիճ, Առատաշեն, Արշալույս, Արտիմետ, Գեղակերտ, Խորոնք, Ծաղկունք, Ծիածան, Հայթաղ, Հովտամեջ և Տարոնիկ համայնքները /11գյուղեր/: «Արմավիր-6» միկրոռեգիոնը արևմուտքից սահմանակից է Արմավիրի տարածաշրջանին, արևելքից Երևանի քաղաքամերձ գոտում գտնվող գյուղախմբին, որոնց թվում Մերձավան և Փարաքար գյուղերն են: Տարածքի հյուսիսային մասում սահմանակից է Արագածոտնի մարզին, իսկ հարավում մինչև Արաքսի ձախ ափերը զբաղեցնում են Արմավիրի մարզի տարբեր այլ միկրոռեգիոններում ընդգրկված տարածքները: «Արմավիր-6» կազմում ներառված համայնքների տարածքը կազմում է 14037.73հա, որոնց վարչական տարածքի բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը՝ /հա/.

1. Վաղարշապատ /Էջմիածին / քաղաք	4328.83
2. Ակնալիճ	1752.91
3. Առատաշեն	969.24
4. Արշալույս	1747.22
5. Արտիմետ	624.16
6. Գեղակերտ	659.09
7. Խորոնք	703.77

8. Ծաղկունք 382.58
9. Ծիածան 309.00
10. Հայթաղ 1240.63
11. Հովտամեջ 269.83
12. Տարոնիկ 1050.47

Բնակավայրերի մեջ Վաղարշապատ /Էջմիածին/ քաղաքային համայնքը զբաղեցնում է 4328.83հա՝ միկրոռեգիոնի 30.8%, իսկ 11 գյուղական համայնքները 9708.9հա, կամ միկրոռեգիոնի 69.2%:

Էջմիածին քաղաքի բնակչության թիվը կազմում է 57.6 հազ.մարդ, իսկ բնակավայրերի հողերի տարածքը 849.11հա, ըստ այդմ՝ քաղաքի բնակչության խտությունը կազմում է 67.7 մարդ/հա: Գյուղերում բնակչության թիվը կազմում է 27.8 հազ.մարդ իսկ բնակավայրերի տարածքը 1590.66հա, բնակչության խտությունը կազմում է 17.47 մարդ/հա:

Արմավիրի մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է:

Գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, գյուղարտադրական, ինչպես նաև սննդամթերքի արտադրության ոլորտների զարգացման հեռանկարները սահմանելու համար պահանջվում են համապատասխան մանրամասն մասնագիտական հետազոտություններ և կոնկրետացում, որը սույն, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակների մեջ ընդգրկված չէ:

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքը հանրապետության գեղեցիկ և ինքնատիպ ճարտարապետական կերպար ունեցող քաղաքներից մեկն է:

Վաղարշապատը հանրապետության տարածքում մեծությամբ չորրորդ քաղաքն է, բնակչությունը՝ մոտ 57.6 հազ.մարդ: Քաղաքի բնակչության 8,4%-ը կազմում է եզդի ազգաբնակչությունը: Քաղաքում ներկա պահին նաև բնակություն են հաստատել սիրիահայերը:

Հանգամանքների բերումով համայնքի ամենախոշոր գործատուն քաղաքապետարանն է, որի համակարգում, բացի հիմնական բաժիններից, ընդգրկված են՝ մարզադպրոցը, ու մանկապարտեզ, գրադարաններ, թանգարաններ, երաժշտական երկու դպրոց, գեղարվեստի դպրոց, մշակույթի տուն, մի քանի այլ հաստատություններ:

Հատկապես վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում ոռոգվող կանաչապատ տարածքների հիմնմանը:

Էջմիածինն ունի գլխավոր ճանապարհ դեպի մայրաքաղաք Երևան /Մեսրոպ Մաշտոց պողոտա/: Միացված է Երևանին գյուղերով: Քաղաքից դեպի Երևան մայրուղին 16.0-17.0կմ է: Մարզկենտրոնից գտնվում է 25.0կմ հեռավորության վրա: Զվարթնոց օդանավակայանից 7.0կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքը կազմում է 4328.83հա, որից քաղաքի տարածքը՝ 852,24հա: Քաղաքի տեղանքը հարթ է, թույլ թեքված դեպի հարավարևմուտք:

Էջմիածինը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, որտեղ ձևավորվել է կլիմայի չոր, խիստ ցամաքային տիպը:

Էջմիածինը նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ է 2007թ.-ից:

Վաղարշապատում կան 7 վանքային համալիրներ, որոնք կառուցվել են IV-X դարերում, գործում են 5 եկեղեցի, որոնցից մեկը՝ Էջմիածնի Մայր Տաճարը Հայաստանի գլխավոր եկեղեցին է և գտնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համալիրի մեջ, որը Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնն է: Բացի այդ պաշտպանության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակում ներառված են՝ 19-20-րդ դարերում կառուցված 11 բնակելի տներ, 17-

ՀՀ ԲՆՕՐՈՒՍՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

20-րդ դդ Էջմիածնի միաբանության գերեզմանոց, նշանավոր գործիչների գերեզմաններ, Եկեղեցական համալիր՝ Վաղարշապատի Ս. Գրիգոր (Զվարթնոցը) 5-7-րդ դդ., թանգարանային և տուն թանգարանների շենքեր, հուշարձաններ, կոթողներ և այլ անշարժ հուշարձաններ:

Էջմիածին քաղաքն ունի 57.6 հազ. բնակիչ: Վերջին տարիների ընթացքում քաղաքում աճ է գրանցվել մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության, ջրամատակարարման ոլորտներում:

Տրանսպորտի ոլորտի և համայնքային ենթակայության ճանապարհների մասով կարևոր է նշել, որ համայնքի բյուջեի հաշվին անընդհատ կատարվում են ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքները:

Կրթության ոլորտում համայնքն ունի իր ենթակայության տակ 11 ՀՈԱԿ-ներ՝ 8 մանկապարտեզ, 2 երաժշտական դպրոց և գեղարվեստի դպրոց:

Համայնքի առողջապահության ոլորտում գործում են առողջապահական 4 հիմնարկներ, որոնք գտնվում են պետական ենթակայության ներքո:

Ներկայում քաղաքում կան հիմնարկ-ձեռնարկություններ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ, փակ և բաց բաժնետիրական ընկերություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և այլ տնտեսվարող սուբեկտներ:

Ներկայում արդյունաբերական ձեռնարկությունները տնտեսական կապերի խզման, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կամ չեն աշխատում, կամ էլ գործում են իրենց հզորության 5-10%-ի չափով:

Էջմիածին համայնքի ավագանու 5 նոյեմբերի 2019թ. թիվ 13 նիստի որոշմամբ հաստատված «Էջմիածին քաղաքի զարգացման 2019-2023թթ հնգամյա ծրագրում» զարգացմանն ուղված գերակայություններում նախանշված է.

- Վաղարշապատի /Էջմիածին/ զբոսաշրջային ինքնության ստեղծումը, զբոսաշրջության և դրա հետ փոխկապակցված բիզնեների զարգացումը,
- Հոգևոր մայրաքաղաքին հարիր ճարտարապետական միասնական ոճ, քաղաքի կոլորիտային դիմագիծ,
- Միջազգային ստանդարտներին համապատասխան հանգստի գոտիներ և այգիներ,
- Հանրային կանաչ տարածքների ավելացումը, նոր հանգստի գոտիների և այգիների կառուցումը,
- Քաղաքի աղբահանության կազմակերպման համակարգային փոփոխումը, կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծումը, այդ թվում աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը,
- Սմարթ լուծումներ, նորարար տեխնոլոգիաների կիրառում, ակտիվ ներդրումային շուկա, զարգացած փոքր ու միջին ձեռնարկություններ:

Ներկայացնելով Էջմիածին քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամաշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու Էջմիածնի քաղաքային կյանքին, մշակութային և հոգևոր ժառանգությանը, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրահատուկ ազգային խոհանոցին և այլն:

Ակնալիճ համայնքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում, Էջմիածնի տարածաշրջանի հյուսիս-արևմուտքում, սահմանակից է հյուսիսից և հյուսիս-արևմուտքից Ֆերիկ և Արշալույս համայնքներին, հարավից և հարավ-արևելքից Տարոնիկ և Մայիսյան

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERTISE CENTER" SNCO
02543183
ՓՈՐՁԱՓՍՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

համայնքներին: Մակերևույթը հարթ է, թույլ մասնատված, կազմված հրաբխային ապարներից: Հեռավորությունը մայրաքաղաքից 38.0կմ է: Համայնքի տարածքով անցնում է Երևան-Էջմիածին- Արմավիր Մ-5 միջպետական նշանակության ավտոմայրուղին:

Ակնալիճը հանդիսանում է Արարատյան դաշտի հնագույն բնակավայրերից մեկը: Այդ են վկայում վերջերս պեղված նախնադարյան մի քանի բերդ շեները: Ակնալճից ոչ հեռու հայտնաբերվել են նաև երկաթի հնագույն ձուլարանի մնացորդներ: Տարածքում կատարված տարբեր պեղումների ժամանակ հայտնաբերվել են տարբեր գտածոներ:

1950-ական թվականներին Հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդ որոշմամբ մինչ այդ չօգտագործվող հողերն իրացվեցին գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար: Այգեգործության, պտղաբուծության և բանջարաբուծության հետագա զարգացումն ապահովելու նպատակով, նոր իրացված հողերի վրա կազմավորվեցին հանրային տնտեսություններ:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 3300 մարդ: Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Համայնքում զարգացած գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը: Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպությունների միջոցով:

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, այդ թվում՝ հանրապետական և մարզային ենթակայության եռահարկ միջնակարգ դպրոց: Գործում է համայնքային ենթակայության թվով 1 առողջապահական կազմակերպություն՝ բուժ.ամբուլատորիա:

Առատաշեն համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում, մարզկենտրոնից հեռավորությունը 24.0կմ է, մայրաքաղաքից՝ 25.0կմ: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ, հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն: Բնակչություն ընդհանուր թիվը կազմում է 3049 մարդ: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ: Գյուղի տարածքում առկա են՝ Քասախ գետի աջ ափին մթա 6-5 հզմ բնակատեղի, ունի հարպետական նշանակություն, 19-րդ դ. Կիսավեր 19-րդ դ. Եկեղեցի և 1980 թ. տեղակայված Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձան՝ քանդ.՝ Լ. Թոքմաջյան, ճարտ.՝ Կ. Գաբրիելյան:

Արշալույս համայնքը, որը հիմնադրվել է 1828թ. առկա են մի քանի տնտեսություն, որոնց թիվը հետագայում աճել է 1915թ.-ին Արևմտյան Հայաստանից ներգաղթած հայրենակիցների շնորհիվ: Արդյունքում հիմնել են շինություններ, մասնակցություն են ունեցել գյուղի հետագա զարգացմանը: 1935թ.-ին գյուղը վերանվանվել է Արշալույս: 1946թ.-ից սկսած, տարբեր երկրներից գյուղ են եկել մեծ թվով հայրենակիցներ, որոնց շնորհիվ գյուղը մեծացել, հզորացել և դարձել է հարմարավետ բնակավայր: Մարզկենտրոնից գտնվում է 17.0կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 25.0կմ: Այստեղով է անցնում Երևան-Արմավիր մայրուղին: Բնակչության առկա թիվը կազմում է 4090 մարդ: Համայնքում բարձր է գործազրկության մակարդակը: Համայնքի գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են՝ հողագործությունը, անասնապահությունը և այգեգործությունը:

Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում ևն ցորենի, գարու, առվույտի արտադրությամբ, խաղողի և պտղատու ծառերի (խնձոր, ծիրան, տանձ) մշակմամբ: Համայնքի բնակիչները զբաղվում են նաև ջերմոցային մշակաբույսերի լոլիկ, վարունգ, պղպեղ, կանաչի, ելակ և այլն, և ծաղիկների . վարդ, մեխակ, թրաշուշան և այլն/ աճեցմամբ: Գյուղի տարածքում

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

առկա պատմամշակույթային հուշարձաններից հայտնի են՝ 14-19-րդ դդ. երկու գյուղատեղի և մեկ գերեզմանոց, 1903-1909 թթ. կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին և այլն:

Արտիմետ համայնքի առաջին պաշտոնական տվյալները եղել են 1831թ. և ունեցել է 129 բնակիչ: Համայնքը գտնվում է էջմիածին քաղաքից 2.0կմ հեռավորության վրա, հարավ-արևմտյան հարթավայրում: Արտիմետը հայաբնակ է, բնակիչները եկել են Իգդիրից, անից 1915-1920թթ., Իրանից 1946թ., Սիսիանից, Ապարանից ,Աշտարակից: Համայնքի վարչական տարածքով հոսում է Քասախ գետը: Կլիման չոր ցամաքային է, տևական ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Ներկայումս համայնքն ունի 2176 բնակիչ: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ: Համայնքում զբոսաշրջության հետաքրքրություն ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ չկան: Գյուղի տարածքում առկա են՝ 1876 թ. կառուցած Ս. Աստվածածին եկեղեցի և 12-17 դդ. վեց խաչքար:

Համայնքն ունի, մեկ միջնակարգ դպրոց՝ վերանորոգված, մեկ մանկապարտեզ, աշխատում է ամբողջ տարին, նախատեսված է 120 սանի համար և գործում է մեկ բուժ ամբուլատորիա:

Գեղակերտ գյուղը գտնվում է ք. Արմավիր տանող ճանապարհի վրա, Արմավիրի մարզի վարչական տարածքում, մարզկենտրոնից դեպի հյուսիս-արևմուտք 25.0կմ հեռավորության վրա, և նույնքան էլ ք. Երևանից: Պետական սահմանից հեռու է 30.0կմ, մոտակա երկաթուղուց՝ 17.0կմ, մոտակա մայրուղուց՝ 3.0կմ, իսկ ՀԱԷԿ-ից՝ 10.0կմ:

Համայնքն ունի 2767 մարդ բնակչություն, հիմնականում տեղաբնակներ են:

Համայնքում կա մշակույթի պալատ, մանկապարտեզ, բուժամբուլատորիան, որը սպասարկում է չորս համայնքի:

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Աշխատունակ տղամարդկանց մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

Գյուղի տարածքում առկա են՝ 19-րդ դ. Ս. Հարություն եկեղեցի և Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան:

Խորոնք համայնքի վարչական տարածքը գտնվում է Արմավիրի մարզում՝ հիմնադրվել է 1827-28թթ և կազմում է 703.77հա: Տեղակայված է Արարատյան դաշտում, Քասախ և Սև ջուր գետերի ափին: Նախկին անվանումները եղել են Այնալու՝ մինչև 1946թ., Լենուղի՝ մինչև 1992թ., Խորոնք՝ 1992թ.-ից: Համայնքը.: Համայնքի 1830թ.-ին կառուցված հողաշեն մատուռը 1990թ. վերակառուցվել է:

Բնակավայրը մարզկենտրոնից 27.0կմ, իսկ Երևանից՝ 24.0կմ հեռավորության վրա է: Համայնքի բնակչության նախնիները հիմնականում 1827-28 թթ.-ից հետո գաղթել են Իրանի Խոյ գավառի Իքիագաչ գյուղից, վերաբնակեցվածներ կան Արևմտյան Հայաստանից, Թուրքիայի Վան և Սուրմալու գավառներից, իսկ 1946թ.՝ Իրանից: Համայնքն ունի 2937 բնակիչ, առկա բնակչության թիվը կազմում է՝ 2713 մարդ: Համայնքում առկա է մշակույթի տուն, վերանորոգման կարիք ունեցող մանկապարտեզի շենք, միջնակարգ դպրոց, գործում են բուժարան, փոստային ծառայություն, վարսավիրանոց, մթերային և խառն ապրանքների 5 խանութ, բենզալցման և գազալցման 1-ական կետեր: Գյուղն ամբողջությամբ գազաֆիկացված է: Սահմանակից է Առատաշեն, Գրիբոյեդով, Արտիմետ, Ծաղկունք, Ծիածան համայնքներին: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
RA ENVIRONMENTAL INSPECTORATE

ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Համայնքում հիմնականում զբաղվում են բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ, խաղողագործությամբ: Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս:

Գյուղի տարածքում առկա են՝ բնակատեղի մթա1-ին դ., 18-20-րդ դդ. գերեզմանոց, 1880թ. Ս. Նշան եկեղեցի, 18-20-րդ դդ. մատուռ և 1988թ. կառուցված Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան:

Ծաղկունք համայնքը կազմավորվել է 1920-ական թվականներից: Համայնքը նախկինում ունեցել է Այլանլու, Այլանլու Վերին անվանումները: 1946թ. գերագույն խորհրդի որոշմամբ գյուղը վերանվանվել է Ծաղկունք: Գյուղը տեղակայված է Քասախ գետի ձախ ափին, Էջմիածին-Արմավիր խճուղու մոտ, Էջմիածնից 2.0կմ հյուսիս-արևմուտք: Բնակեցված է եղել Իրանից, Արևմտյան Հայաստանից 1946թ. հայրենադարձված բնակիչներով:

Համայնքն ունի բարենպաստ աշխարհագրական դիրք, հեռավորությունը մարզկենտրոնից 25.0կմ, Երևան-Էջմիածին մայրուղուց՝ 2.0կմ, Երևանից՝ 25.0կմ, Զվարթնոց օդանավակայանից՝ 10.0կմ:

Կլիման բարենպաստ է. ձմեռը միջին ցրտության, ամռանը՝ շոգ և քամոտ: Խմելու ջուրը քաղցրահամ է և բարձրորակ, որը մատակարարվում է Նազրվանի և Բազմաղբյուրի խորքային հորերից: Անցած տարիների համեմատ համայնքում գրանցվել է բնակչության աճ: Ներկայումս հաշվառված է 1386 մարդ:

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, եգիպտացորենի, առվույտի, բանջարանոցային մշակաբույսերի մշակությամբ: Համայնքում առկա է նաև ջերմոցային մշակաբույսերի /լոլիկ, վարունգ.../ և ծաղիկների /վարդ, ալստրոմերիա/ աճեցմամբ:

Համայնքի տարածքում առկա է բուժկետ, սակայն չկա նախադպրոցական հիմնարկ և դպրոց: Համայնքի թվով 107 աշակերտ հաճախում է Ծիածանի միջնակարգ դպրոց: Համայնքը նախկինում ունեցել է մանկապարտեզ, որը շենքային անբարենպաստ ու վթարային պայմաններից ելնելով, այժմ չի գործում:

Գյուղի տարածքում առկա են՝ մթա 2-1 հզմ բնակատեղի «Մխըլ Թափա», 19-20-րդ դդ գերեզմանոց և 19-րդ դ. եկեղեցի:

Ծիածան /նախկին Գրամփա/ գյուղի վարչական տարածքը կազմում է 309.0հա, գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Քասախ գետի ափին, մարզկենտրոնից 25.0կմ հեռավորության վրա:

Գյուղը Հայաստանի հնագույն բնակավայրերից է՝ պատմական անցյալը կապված է կիկլոպյան դարաշրջանի հետ: Գյուղի տարածքում եղել է կիկլոպյան ամրոց, որը զբաղեցրել է 8.0հա տարածք՝ մինչև օրս պահպանելով պատմական անցյալի հիմքերը, ամրոցի բազալտե քարերը: Կատարվել են պեղումներ, որի ընթացքում հայտնաբերվել են մի շարք ստորգետնյա շենքեր, խեցեղեն զարդեր,մետաղյա իրեր: Քասախ գետի հունի մոտ հայտնաբերվել է սև գույնի կարաս,որն ունի 4000 տարվա պատմություն: Գյուղը հնում Մեծամորի ձուլարանին կավ է մատակարարել:

Գյուղը գազաֆիկացված է, կա հեռախոսային կապ, շուրջօրյա խմելու ջրով ապահովված են բոլոր բնակարանները: Համայնքը ունի մշակույթի տուն, գրադարան, հոսահարկ դպրոց՝ սպորտդահլիճով, բուժկետ, փոստային բաժանմունք: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ;

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են դաշտային և ջերմոցային մշակաբույսերի աճեցմամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Ծիածան համայնքի բնակչության թիվը կազմում է 1390 մարդ: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի ավելանում է: Բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամաս, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ:

Ծիածան համայնքի տարածքում է գտնվում Ծիածան-Հայկաշենի ավազակոպճային խառնուրդի /ԱԿԽ/ հանքը, որի պաշարը կազմում է՝ 15599.4հազ.մ^3:

Հայթաղ համայնքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան գոգավորության վրա: Տարածքի հատակագիծը հարմարեցված է ռելիեֆին՝ կապված բնական պայմաններից: Հայթաղ համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 1240.63հա, հեռավորությունը մայրաքաղաքից 25.0կմ է, իսկ մարզկենտրոնից՝ 20.0կմ, տարածքով է անցնում Երևան-Էջմիածին-Արմավիր հանրապետական նշանակության ճանապարհը:

Համայնքում ապրում են 3110 բնակիչ, իսկ նրանց առկա թիվը հասել է 3194 մարդի: Այն համարվում է բավականին խիտ բնակեցված գյուղական համայնք, որտեղ բնակվող ազգային փոքրամասնություններից են եզդիները:

Ըստ արխիվային փաստաթղթերի Հայթաղում դպրոցը հիմնվել է 1914թ., գործում է հանրակրթական միջնակարգ դպրոց, իսկ բնակչության մոտ 10%-ը ունի բարձրագույն կրթություն: Բացի այդ համայնքում գործում է նախադպրոցական ուսումնական հաստատություն, իսկ շենքը 2010թ. մասնակի վերանորոգվել է: Գյուղի տարածքում առկա են՝ 1863թ. եկեղեցի, 1967թ. Մշակույթի տուն և 1988թ. Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան:

Հայթաղի գյուղը բոլոր կողմերից շրջապատված է գյուղատնտեսական նաշանակության հողերով, որոնք հիմնականում գտնվում են ոռոգման տակ: Մեխանիկական և ինքնահոս եղանակով ոռոգվում է շուրջ 648.0հա, իսկ 592.63հա չի ոռոգվում: Տարածաշրջանը բաժանվում է հողային երկու գոտու՝ Մերձարաքսյան և Ուրծ-Կոտայք-Շամիրամյան: Գյուղատնտեսական հողատարածքներում մեծ բաժին ունեն վարելահողերը (648.0հա), որից՝ պտղատու (2.0հա) և խաղողի այգիները (47.0հա):

Հովտամեջ համայնքը (նախկին Մուղան), հիմնադրվել է 1831թ.-ին, Երևանից ունի 29.0կմ, մարզկենտրոնից՝ 25.0կմ հեռավորություն, ավտոմայրուղուց՝ 3.0կմ, երկաթուղուց՝ 20.0կմ, ՀԱԷԿ-ից՝ 15.0կմ: Սահմանակից է Գեղակերտ, Ծիածան, Առատաշեն համայնքներին: Բնակչության առկա թիվը կազմում է 1468 մարդ:

Համայնքում 2008թ.-ին կառուցվել է հանրակրթական դպրոց, որին կից գործում է նաև նախակրթարան: Գյուղն ունի մեկհարկանի մանկապարտեզ, որը կառուցվել է 1962թ., այժմ չի գործում: Համայնքի տարածքում գործում է «Հովտամեջի բժշկական ամբուլատորիա»: Տարածքում առկա է 19 դ. կիսավեր եկեղեցի:

Տարոնիկ համայնքը գտնվում է մարզի հյուսիս–արևելյան մասում՝ նախալեռնային գոտում, մայրաքաղաքից 25.0կմ, իսկ մարզկենտրոնից՝ 15.0կմ, հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1831թ.-ին, Արարատյան դաշտի մերձարաքսյան գոտու, աղուտ, անօգտագործելի հողերի վրա, ընդամենը 15 ընտանիքով: Հետագայում գյուղը համալրվել է հանրապետության տարբեր շրջաններից և 1915թ-ին Արևմտյան Հայաստանի (Մուշ, Վան, Էրզրում, Ալաշկերտ, Ղարս) նահանգներից: Գյուղի կլիման՝ ձմեռը-ցրտաշունչ է, ամառը շոգ, հաճախակի են ցրտահարությունները, երաշտը, որից տուժում է գյուղատնտեսությունը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱ ԵՐԵՎԱՆ "ԷԿՈՊԵՐՏԻԶԻՆԻ ԿԵՆՏՐՈՆ" ՊՈԱԿ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER, SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Համայնքը ունի երկհարկ դպրոց, վերանորոգված համայնքապետարան՝ լոկալ ջեռուցումով, փոստ, բուժական ամբուլատորիա:

Համայնքը իր վարչական տարածքով սահմանակից է Առատաշեն, Արշալույս, Ակնալիճ Զարթոնք, Արդաշար համայնքներին, շրջկենտրոնից հեռավորությունը 7.0կմ է: Հանայնքի բնակիչների հասարակական տրանսպորտով սպասարկումը կատարվում է Էջմիածին քաղաքից՝ երթուղային ավտոբուսների միջոցով: 400 բնակելի տներ և բնակարաններ գազիֆիկացվել են, կառուցվել է գազամատակարարման երեք կայան, անցկացվել է շուրջ 14.0կմ երկարությամբ գազատար խողովակաշար: Համայնքն ունի 2291 բնակիչ: Տարոնիկ համայնքում սկսած 1992թ.-ից, կատարվել են հողհատկացումներ: Համայնքն ունի երկհարկ միջնակարգ դպրոց՝ լրիվ վերանորոգված, մանկապարտեզ, որը չի գործում շենքի վթարային լինելու պատճառով: Համայքում գործում է մեկ բուժական ամբուլատորիա:

Գյուղի տարածքում առկա է՝ 1730-1732թթ. կառուցած ջրհավաք համակարգ թունելով և ջրամբարով, 18 դ. կեսին կառուցած ջրաղաց, որոնք ունեն տեղական նշանակություն: Մեծամոր գետի ձախ ափին գտնվող մթա 4-1 հզմ-17-րդ դ. Մեծամոր քաղաքատեղի, մթա 3-1 հզմ միջնաբերդ, մթա 2 հզմ վրջ-1 հզմ սկզբ պալատական համալիր, մթա 2-1 հզմ հարստացուցիչ գործարան, մթա 2 հզմ վրջ-1-հզմ սկզբ ձուլարանների համալիր, մթա 2 հզմ վիշապաքար, մթա 3 հզմ աստղադիտարան և մթա 2-1 հզմ դամբարանադաշտ,ինչպես նաև 1968թ. կառուցած Մեծամորի թանգարանի շենքը, ճարտ.՝ Բ. Արզումանյան: Վերջին ինը հուշարձաններն ունեն հանրապետական նշանակություն: Համայնքում հողի սեփականաշնորհման գործընթաց չի իրականացվել:

Արմավիրի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց: Մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 613.0կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 123.0կմ, հանրապետական նշանակության՝ 91.6կմ: Բնակչության 99%-ը ապահովված է մշտական երթուղային ավտոտրանսպորտային կապով: Մարզի տարածքով է անցնում «Հարավկովկասյան երկաթուղու» 70.0կմ երկարությամբ հատվածը: Առկա է տեղական նշանակության 35.0կմ երկարությամբ երկաթուղի, որից գործում է Արմավիր-ՀԱԷԿ 12.0կմ երկարության հատվածը:

Մարզի բոլոր բնակավայրերը ապահովված են խմելու ջրով: Քաղաքները ունեն կեղտաջրերի հեռացման համակարգ /կոյուղի/, որոնց մաքրման կայանները կարիք ունեն արմատական նորոգման և վերագործարկման:

Էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը իրականացվում է համապատասխան ծառայությունների կողմից: Բնակավայրերի տարածքի սանիտարական մաքրումը կատարվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Աղբի կուտակման, վնասազերծման, վերամշակման խնդիրները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարիք ունեն:

Արմավիրի մարզը կազմավորվել է 1995թ.-ին և գտնվում է ՀՀ-ի տարածքի արևմտյան մասի հարավային հատվածում: Այն զբաղեցնում է ՀՀ տարածքի մոտ 4.2% կամ 1242.0կմ^2 մակերես, իր մեջ ընդգրկելով Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Սահմանակից է Երևանին (արևելքում), Արագածոտնի (հյուսիսում), Արարատի (հարավ-արևելքում) մարզերին: Հարավ-արևմուտքում և հարավում Արմավիրի մարզը ՀՀ պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:

ՀՀ Արմավիրի մարզը բնակչության թվով և խտությամբ զիջում է միայն Երևան քաղաքին: Մարզի բնակչությունը 266 հազ. մարդ է, որը կազմում է հանրապետության բնակչության 8.9%-ը:

02543163
ՓՈՐՁԱԲՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Մարզի երեք՝ Արմավիր, Էջմիածին և Մեծամոր, քաղաքների բնակչությունը միասին կազմում է 84.6 հազ. Մարդ կամ մարզի բնակչության 31.7%: Գյուղական բնակչությունը կազմում է 181.8 հազար մարդ կամ մարզի բնակչության 68.2%:

Մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր Ակնա լիճը, որը զբաղեցնում է 50.0հա մակերես, հատակը ծագարաձև է և ունի ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը) իր միակ Քասախ վտակով: Ջրային ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորերկրյա ջրային ռեսուրսներով:

Ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է: Ծովի մակարդակից բարձրությունը՝ 800-1000մ: Կլիման խիստ ցամաքային է:

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան հարթավայրի բարեբեր հողերում: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 97.0հազ.հա-ից ավելի տարածք, կամ մարզի վարչական տարածքի 78.2%, գյուղատնտեսական նշանակության հողերի 63.5%-ը ոռոգելի հողեր են: Չմշակվող հողերը կազմում են 13.0հազ.հա-ից ավելի տարածք, որից աղակալած է շուրջ 3.0հազ.հա-ից ավելի տարածք կամ չմշակվող հողերի 22.6%-ը: Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Արմավիրի մարզում բնական ծագման անտառածածկ տարածքներ չկան և հարուստ չէ օգտակար հանածոներով: Տարածքում առկա են տուֆի ու բազալտի քարերի, ավազի, խճի, ավազակոպճային խառնուրդի, գիպսի հանածոների թվով 42 հանքավայրեր, որոնից 12-ը չեն շահագործվում:

Հանրապետությունում միակ «Որդան Կարմիր» արգելավայրը գտնվում է Արազափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում՝ զբաղեցնելով 219.85հա տարածք: Այն ՀՀ-ում էնդեմիկ արժեքավոր՝ որդան կարմիր, միջատի և նրա սնման օբյեկտ հանդիսացող որդանախոտի հատուկ պահպանության օբյեկտ է:

Մարզի բոլոր բնակավայրերը ապահովված են խմելու ջրով: Քաղաքները ունեն կեղտաջրերի հեռացման համակարգ /կոյուղի/, որոնց մաքրման կայանները կարիք ունեն արմատական նորոգման և վերագործարկման:

Էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը իրականացվում է համապատասխան ծառայությունների կողմից: Բնակավայրերի տարածքի սանիտարական մաքրումը կատարվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Աղբի կուտակման, վնասազերծման, վերամշակման խնդիրները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարիք ունեն:

Առանձին բնակավայրերի վերլուծությամբ ի հայտ են բերվել համընդհանուր խնդիրների համալիր, որոնք առկա են գրեթե բոլոր բնակավայրերում:

- Հաղորդակցության ուղիների մասով՝ ներքին փողոցային ցանցի կարծր ծածկույթի նորոգման աշխատանքների անհրաժեշտություն, գիշերային լուսավորության համակարգի անցկացում:
- Ենթակառուցվածքների մասով՝ ջրամատակարարման, ոռոգման համակարգերի նորոգում, ընդլայնում, կոյուղու համակարգի իրականացում, աղբահանության կազմակերպում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- Քաղաքային տնտեսության մասով՝ շենքերի ընթացիկ նորոգումներ, տանիքների վերանորոգում, հանրային տարածքների կազմակերպում:

Նախագծում հաշվի են առնվել նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված գերակայությունները: Ըստ տնտեսության առկա վիճակի վերլուծություն տարածաշրջանն ունի ընդգծված ագրարային ուղղվածություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Խորհրդային շրջանում լայն տարածում են ունեցել նաև ծխախոտագործությունը և ճակնդեղի մշակումը: Համայնքը ունի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման խնդիր:

Ճանապարհային ցանցի բարելավման և արդիականացման արդյունքում առաջադրվել է բնակավայրերի միջև հաղորդակցությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում, ճանապարհային ցուցանակների տեղադրում:

«Արմավիր-6» միկրոռեգիոնում ներկա դրությամբ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ) կան Առատաշեն 1.53հա, Խորոնք 0.7հա և Հայթաղ 0.6հա համայնքներում, ընդամենը կազմելով 2.83հա: Մնացած համայնքներում, ինչպես նաև Վաղարշապատում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ չկան:

Սահմանափակ օգտագործման կանաչի տարածքը հաշվարկվում է տնամերձ հողամասերի պտղատու այգիների և բանջարանոցների մակերեսից, որը կազմում է տնամերձ հողամասի շուրջ 0.5-0.6 մասը: Բացի նշվածից սահմանափակ օգտագործման կանաչապատման մեջ ընդգրկված են հասարակական կառուցապատման հողամասերի կանաչապատ հատվածները: Ներկա դրությամբ այն կազմում է՝ շուրջ 3111.33հա:

Հատուկ նշանակության կանաչապատոման մեջ հաշվարկվում է բնակավայրերի փողոցների, ճանապարհների և հրապարակների, ինպես նաև սանիտարապաշտպանիչ գոտիների կանաչապատ հատվածները: «Արմավիր-6» միկրոռեգիոնում հատուկ նշանակության կանաչապատումը ներկայացված է Վաղարշապատում, որը կազմում է քաղաքային փողոցների և հրապարակների տարածքի /ընդհանուր օգտագործման տարածք/ մինչև 7-ից 10%: «Արմավիր-6» միկրոռեգիոնում ներկա դրությամբ հատուկ նշանակության կանաչապատման հաշվարկային տարածքը կազմում է շուրջ 11.5հա:

Սույն նախագծային մշակումների շրջանակներում Վաղարշապատ քաղաքում կատարվել է Վաղարշապատի քաղաքապետարանի կողմից նշված 76.43հա տարածքի գոտևորման նախագիծ: Նախագիծով նախատեսված է բնակելի կառուցապատման գոտի, որը կունենա տարբեր հարկայնության բնակելի շենքեր: Տարածքի բնակելի կառուցապատումը զբաղեցնելու է 46.8հա, հասրակական կառուցապատման գոտին 11.48հա, ընդհանուր օգտագործման տարածքը 16.35հա, որից 5.45հա նախատեսված է զբոսայգիների և պուրակների ստեղծման համար:

Տարածքային զարգացման հատակագծային կազմակերպում բաժնում գոյություն ունեցող վիճակի վերլուծության հիման վրա տրված է հատակագծատարածական կառուցվածքի, ճանապարհային ցանցի և ինժեներական ենթակառուցվածքների բարելավման ու կատարելագործման ուղղությամբ հեռանկարային առաջարկությունների համակարգ: Առանձին ներկայացված են հողօգտագործման, բնակարանային ֆոնդի, հասարակական սպասարկման համակարգի, ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղի) և ոռոգման,

02543163
ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գազամատակարարման կատարելագործման նկատառումներ՝ համապատասխան հիմնավորումներով:

Նշված գյուղական համայնքներում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 2439.77հա մակերես 16 հատ աղբավայր: Միկրոռեգիոնի տարածքում ընդգրկված՝ Վաղարշապատ քաղաքի, Ակնալիճ, Առատաշեն, Արշալույս, Արտիմետ, Գեղակերտ, Խորոնք, Ծաղկունք, Ծիածան Հայթաղ, Հովտամեջ և Տարոնիկ համայնքների համար աղբի հեռացման, տեսակավորման և վերամշակման վայր առաջարկված է նախատեսել Շահումյան համայնքին հարակից աղբավայրը: Նշված վայրը գտնվում է «Արմավիր-6» միկրոռեգիոնի սահմաններից դուրս, դեպի հյուսիս ընկած հատվածում: Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արդյունաբերական թունավոր թափոնները բացակայում են:

Ընդհանուր առմամբ «Արմավիր-6» տարածքում գործում են 16 գերեզմանատուն, որոնցից 13-ը գյուղական համայնքներում է: Գերեզմանատների մակերեսը կազմում է 165.2 հա (գյուղեր): Գերեզմանոցները գործող են: Էջմիածին քաղաքն ունի չորս գերեզմանատուն՝ ընդհանուր 46.97հա տարածքով, որոնք չունեն ՍՊԳ և համաճարաբանական տեսակետից որոշակի վտանգ են ներկայացնում, դրանք են.

1. Զվարթնոցի տաճարի մոտ - 6.17հա
2. սբ Հռիփսիմե եկեղեցու մոտ -7.33հա
3. Հարավային մասում, դեպի Մարգարա գնացող ճանապարհի մոտ - 5.3հա
4. Հարավ-արևելյան ուղղությամբ - 28.17հա /վճարովի/:

Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները, որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման նպատակով:

Առանձին բաժնով տրված է համայնքի տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակը:

Հիմնադրույթային փաստաթղթում ներկայացվել է նաև գոտևորման նախագիծը, որտեղ ամրագրված են հողատեսքերի գործառական նշանակություններով պայմանավորված գոտիները՝ իրենց հապավումներով, դրանց օգտագործման չափորոշիչների համալիրը:

Հիմք ընդունելով առկա վիճակի վերլուծությունը և ՀՀ կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը կարող ենք նախանշել, որ բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են:

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում;
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում;
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում;
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում;
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում;
- Գետեր թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում;
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում;
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում;
- Համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում;

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում;
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում(սպանդանոցի կառուցում);
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում;
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում,աղբամշակման գործարանի կառուցում;
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում;
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ;
- խիստ վերահսկողության սահմանում՝ մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;
- անցնել ջեռուցման նոր տեխնոլոգիաներին, որը կկրճատի մթնոլորտ արտանետումները մոտ 108տ/տարի;
- շրջաններում եռամսյակը մեկ շրջակա միջավայրի (օդ, ջուր,հող) մոնիտորինգի կազմակերպում;
- անցնել աղբի տեսակավորման;
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմամբ, անասնապահության հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում: Բայց տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

Միջոցառումները կտեղայնացվեն մարզի տարբեր տարածաշրջաններում առկա ներուժին և զարգացման հեռանկարներին համապատասխան:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետապնդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

«Արմավիր-6»-ի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակով:

Պատճառաբանական մաս: Ամփոփելով հիմնադրույթային փաստաթղթի լուծումների արդյունավետությունը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների կարծիքը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

դիտողություններն ու առաջարկությունները, իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

ԱՐՄԱՎԻՐ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (Ձև 3)				
Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափի միավորը	Ելակետային	Առաջնահերթ	Հեռանկարային
1	2	3	4	5
Տարածքը (ընդամենը),այդ թվում՝	**հա**	**14037.73**	**14037.73**	**14037.73**
գյուղատնտեսական նշանակության հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողատեսքեր)	հա	10568.16	10458.10	10408.12
բնակավայրերի հողեր	հա	2439.77	2548.79	2572.41
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	հա	464.29	459.25	463.44
էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	հա	146.64	146.03	152.15
հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	159.29	166.62	182.66
հատուկ նշանակության հողեր	հա	50.96	50.96	50.97
անտառային հողեր	հա	15.86	15.86	15.86
ջրային հողեր	հա	192.76	192.12	192.12
պահուստային հողեր	հա	0.00	0.00	0.00

«Արմավիր-6» (ՄՄՀՏՊՓ) միկրոռեգիոնի բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել է առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումը, նպաստելու է տարածքի էկոլոգիական հավասարակշռության

պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի «Արմավիր-6» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջ պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Յու.Մատինյան